ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

15 հոկտեմբերի 2021թ. թիվ 1435

ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ՄԻ ՇԱՐՔ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ
ԵՐԵՎԱՆ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասով, ՀՀ կառավարության 2018 թվականի նոյեմբերի 8-ի թիվ 1239-Ն որոշմամբ սահմանված կարգի 4-րդ և 10-րդ կետերով, հիմք ընդունելով Լոռու մարզպետարանի գլխավոր քարտուղարի տեղակալի զեկուցագիրը՝

Հ ր ա մ ա յ ո ւ մ եմ.

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետարանի գլխավոր քարտուղարի տեղակալ Հեղինե Հալիվորյանին, գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Արուս Թումանյանին, նույն վարչության գյուղատնտեսության բաժնի պետ Արտյոմ Շահվերդյանին, ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Մերի Դալլաքյանին, կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Արամ Գրիգորյանին, նույն վարչության պետի տեղակալ Արփինե Մատինյանին, մշակույթի և սպորտի բաժնի պետ Արամ Ռևազյանին, տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Աննա Գասպարյանին, իրավաբանական բաժնի պետ Ալիկ Սահակյանին, զարգացման ծրագրերի, զբոսաշրջության և վերլուծության բաժնի գլխավոր մասնագետ Անի Բաղդասարյանին և նույն բաժնի ավագ մասնագետ Անի Մալոյանին ս/թ հոկտեմբերի 18-ին մեկ օրով գործուղել ք.Երևան՝ «Նոր իրողությունների պարագայում ռուս-հայկական համագործակցության հեռանկարներ» խորագրով հայ-ռուսական միջտարածաշրջանային ութերորդ համաժողովին մասնակցելու համար:

2. Մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչությանը՝ սահմանված կարգով փոխհատուցել գործուղման հետ կապված ծախսերը:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

15/10/2021

X

ԿԱՄՈ ԱՇՐԱՖՅԱՆ

Կ.ԱՇՐԱՖՅԱՆ

2021թ. հոկտեմբերի 15
ք.Վանաձոր